Նարեկ Սարգսյան

Մտազբաղը

Հնչեց զարթուցիչի զանգը: Առավոտյան ժամը 08:00-ն էր: Անկողնուց վեր կենալ չէր ուզում . քնել

էր ուզում: Արդեն մոտ 20 տարի էր, ինչ նման տաղտկալի առօրյայով էր ապրում . ամեն աշխատանքային օրվա առավոտ վեր կենալ, լվացվել, մեկ գավաթ սուրճ խմել ու գնալ աշխատանքի: Աշխատանքն էր նրա սրտով չէր, քանի որ նախ՝ աշխատավարձը ցածր էր, երկրորդն էլ՝ առաջխաղացման ոչ մի հեռանկար չկար: Ընտանիք ու երեխաներ չուներ: Պատճառն այն էր, որ երբեք չէր մտածել այդ ուղղությամբ՝ ցածր եկամուտների պատճառով:

Անկողնուց վեր կացավ, լվացվեց, պատրաստեց իր համար մեկ գավաթ սուրճ ու սկսեց խորհել:

<<Այսօր ի՞նչ կարող եմ անել իմ կյանքում փոփոխություն մտցնելու համար>>,-հարցրեց ինքն իրեն: Այս հարցը շատ երկար ժամանակ էր, ինչ տալիս էր ինքն իրեն, բայց պատասխան չէր ստանում:

Նստած տեղից վեր կենալով՝ գնաց բաց պատշգամբից նայելու: Տեսարանը միօրինակ էր՝ մարդիկ շտապում էին նստել իրենց ավտոմեքենաներն ու գնալ աշխատանքի, աշակերտներն էլ, իրար հետ խոսելով ու կատակելով, դպրոց էին գնում:

<<Բայց խի՞ իմ հասակակիցները ունեն ամեն ինչ՝ սեփական բնակարան, ավտոմեքենա, ընտանիք, իսկ ես՝ ոչինչ, չնայած նրանք ոչնչով ինձնից առավել

չեն>>,-խորհում էր նա՝ փորձելով գտնել պատասխաններ, բայց պատասխաններ գտնել փորձելուց մտքերը խճճվում էին, ու դա նրան ավելի էր զայրացնում:

Սովորականի պես դուրս եկավ տանից՝ շտապելով աշխատանքի: Աշխատավայրը տնից մոտ էր գտնվում, հետևաբար միշտ ոտքով էր գնում:

Աշուն էր: Ծառերի տերևները, հագած իրենց դեղին զգեստները, մեղմորեն խշշում էին: Քայլում էր արագ ու մտազբաղ՝ չնկատելով այն գեղեցիկ պատկերը, որ նկարել էր

աշունն իր կախարդական վրձնով:

Հնչում է սմարթֆոնի զանգը: Տեսնելով էկրանին զանգահարողի հեռախոսահամարը՝ խոժոռվեց:

<<Էս հիմարն առավոտը շուտ ինձնից ինչ ա ուզում, հոգնեցրեց թողեց>>:

Զանգահարողը գործընկերն էր՝ Մարինեն, ով պաշտոնով իրենից բարձր էր ու երկու անգամ իրենից շատ աշխատավարձ էր ստանում, թեև անգամ համակարգչով տեքստ հավաքել չգիտեր: Նա հիսունհինգ տարեկան, ինքնահավան, չոր բնավորությամբ կին էր, ով սիրում էր իր սխալներն ուրիշների վրա բարդել:

-Ալո:

-Ալո, Սամվե՛լ, բարի լույս,-ասաց Մարինեն:

-Բարի լույս, Մարինե, ի՞նչ ա պատահել:

-Սամվել, գալի՞ս ես:

-Հա, ճանապարհին եմ:

-Դե արի, որ գրություն ենք ստացել, տեսնենք ի՞նչ ենք անում:

-Լավ,-դժկամությամբ ասաց Սամվելը՝ անջատելով հեռախոսը:

<<Առավոտը շուտ որ չզզվացնի, չի լինի: Էդ հիմարն էդպես էլ աշխատել չսովորեց, չնայած ինչի՞ պետք ա սովորի, մեկ ա, աշխատի, թե չաշխատի, իր աշխատավարձը ստանալու ա, իսկ իր գործերն էլ ուրիշին վզին կփաթաթի: Էս երկրի պետական հիմնարկներում խայտառակություն ա: Բարձր պաշտոնների են նստած ոչ կոմպետենտ մարդիկ, որոնք էդ աթոռին նստել են պատահականության կամ ծանոթ-բարեկամի շնորհիվ, իսկ իմ նմաններն էլ էդ կիսաանգրագետների ձեռքը կրակն են ընկել>>,- խորհում էր՝ քայլելով:

Երբ հետիոտային անցումով անցնում էր ճանապարհի մյուս մայթը, մի ավտոմեքենա, որից լսվում էր բարձ երաժշտության ձայներ, արագ պանալով, չզիջեց ճանապարհը, թեև պարտավոր էր զիջել:

<<Տեսնես էս հիմարին ո՞վ ա պրավա տվել: Էդ պարեկներն էլ շատ թույլ են, չեն կարողանում կարգ ու կանոն հաստատել ոնց որ պետք ա>>,-մտածեց՝ շարունակելով ճանապարհը:

Քայլելիս Սամվելը չնկատեց շենքերից մեկի պատին փակցված հայտարարությունը, որտեղ նշվում էր, որ բարձր վարձատրվող թափուր աշխատատեղի համար հայտարարվել է մրցույթ:

Ախր ի՞նչպես նկատեր, որ ողջ միտքն ու ուշադրությունը կենտրոնացրել էր բացասական երևույթների ու տհաճ մարդկանց վրա: Անգամ աշնան գեղեցկությունը չնկատեց:

Սեփական կյանքը փոխելու հնարավորությունները պետք է նկատել, բայց դրա համար անհրաժեշտ է, որ ուշադրությունդ ու միտքդ ճիշտ ուղղությամբ կենտրոնացած լինեն: